

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/6

8 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Գոլդ Գրուպ» ՍՊԸ 12.08.2015 թ-ի դիմում-բողոքը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 21.07.2015 թ-ի թիվ 5104033 ակտի դեմ:

«Գոլդ Գրուպ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

Սույն թվականի հուլիսի 6-ին մոտավորապես ժամը 12:15-ի սահմաններում «Գոլդ Գրուպ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) այցելել են երկու երիտասարդ տղաներ և ընկերության փոխտնօրենին ներկայացել են որպես Շենգավիթի հարկային տեսչության տեսուչներ: Վերջիններս տեղեկացրել են, որ գնում է կատարվել ընկերությանը պատկանող խանութից՝ գնվել է երկու հատ 100 դրամ արժողությամբ հաց, որի դիմաց ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ընկերության փոխտնօրենը նրանց տեղեկացրել է, որ բացառապես բոլորին տրամադրվում են ՀԴՄ կտրոններ:

Հարկ է նշել այն մասին, որ տեսախցիկներն արձանագրել են, որ մինչև հարկային տեսուչների ժամանման պահը ոչ ոք երկու հատ 100 դրամանոց հաց չի գնել: Ընդ որում, հարկային տեսուչները որպես ապացույց չեն ներկայացրել, թե գնված ապրանքները և թե գնորդին:

Տեսուչների կողմից նշված անձնավորությունն այն մարդն է, որին ընկերությունը կասկածում է հսկիչ գնում կատարելու մեջ: Նա գնել է երկու հատ 100 դրամ արժողությամբ հաց և մեկ հատ 220 դրամ արժողությամբ պաղպաղակ: Գնորդը գնված ապրանքների համար կատարել է մեկ վճարում, որի դիմաց նրան տրամադրվել է 420 դրամին համարժեք ՀԴՄ կտրոն: Նշվածում համոզվելու համար ընկերությունը խնդրում է ՀԴՄ-ից դուրս բերել ընդլայնված Z հաշվետվություն և համոզվել, որ այդ ժամանակահատվածում (մինչև հարկային տեսուչների ներկայանալը) 420 դրամի ՀԴՄ կտրոն տպվել է: Անհրաժեշտության դեպքում ընկերությունը պատրաստ է տրամադրել առկա համապատասխան ապացույցները:

Փոստով ստացված արձանագրության մեջ նշված է, որ ընկերության տնօրենը հրաժարվել է ստորագրել արձանագրությունը և ակտը, այն դեպքում, երբ փոխտնօրենը տեսուչներին իրազեկել էր, որ տնօրենը բացակայում է քաղաքից:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 21.07.2015 թ-ի թիվ 5104033 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի 26.06.2015 թ-ի թիվ 5104033 հանձնարարագրի համաձայն «Գոլդ Գրուպ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման

թիվ 5104033 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Ալեքսանդր Ավագյանի կողմից 06.07.2015 թ-ին ժամը 12:00-ին ք.Երևան, Աէրացիա 1 հասցեում գտնվող հացամթերքի կետից կատարվել է գնում 200 դրամի չափով՝ 2 հատ հաց (1 հատը 100 դրամ), որի դիմաց կանխիկ վճարված գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ստուգումն իրականացնող անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 12:05-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն 800 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Չմուտքագրված գումարը ժամը 12:06-ին մուտքագրվել է ՀԴՄ և նորից դուրս է բերվել Z հաշվետվություն 200 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշման 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Ընկերության բողոքում մասնավորապես նշված է, որ 06.07.2015 թ-ին ժամը 12:15-ի սահմաններում ընկերություն են այցելել հարկային տեսչության երկու աշխատակիցներ և հայտարարել, որ կատարվել է երկու հատ 100 դրամանոց հացի գնում, որի դիմաց ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Բողոքում նշված է նաև, որ տեսախցիկներն արձանագրել են, որ մինչև հարկային տեսուչների ժամանման պահը ոչ ոք երկու հատ 100 դրամանոց հաց չի գնել:

Ընկերության վերոգրյալ պնդումներն իրականությանը համապատասխանելու հանգամանքը պարզելու նպատակով Հանձնաժողովն ընկերության ներկայացուցիչներին առաջարկեց ներկայացնել տեսախցիկի 06.07.2015 թ-ի (գնումը կատարվելու օրվա) տեսագրությունը:

Ընկերության ներկայացուցիչները հայտարարեցին, որ այդ օրվա տեսագրությունը չի պահպանվել: Նրանք նշեցին նաև, որ կարող են ներկայացնել միայն տեսախցիկներին միացված հեռուստաէկրանից բջջային հեռախոսով կատարված տեսանյութը, որն իրենց կարծիքով հիմնավորում է իրենց կողմից բերված փաստարկները:

Հանձնաժողովն առաջարկեց ներկայացնել այն տեսագրությունները, որոնք վերաբերվում են վերջին մի քանի օրերին: Ընկերության ներկայացուցիչները հայտարարեցին, որ պահանջվող տեսագրությունները կտրամադրվեն միայն դրանց տրամադրումը ՀՀ օրենսդրության պահանջներից բխելու հանգամանքը պարզելուց հետո:

Իրականում ընկերության կողմից տրամադրվել է միայն 07.06.2015 թ-ի թվագրմամբ ժամը 12:05:23-ից մինչև 12:06:31-ը (ըստ տեսաձայնագրության ժամանակի) տեսախցիկներին միացված հեռուստաէկրանից բջջային հեռախոսով կատարված տեսանյութ, որում ընդամենն արտացոլված է ոմն քաղաքացու կողմից երկու հատ հաց գնվելու գործընթացը: Հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված տեսանյութը որևէ կերպ չի հիմնավորում ընկերության բողոքում բերված փաստարկները:

Ինչ վերաբերվում է վերջին մի քանի օրերի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից պահանջված տեսանյութերի տրամադրմանը, ապա ընկերության կողմից դրանք չեն

Ինչ վերաբերվում է վերջին մի քանի օրերի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից պահանջված տեսանյութերի տրամադրմանը, ապա ընկերության կողմից դրանք չեն ներկայացվել պատճառաբանելով, որ դրանց տրամադրումը տեխնիկապես հնարավոր չէ:

Սույն գործում առկա փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են 06.07.2015 թ-ին ժամը 12:00-ին ընկերության ք.Երևան, Ալեքսանյան 1 հասցեում գտնվող հացամթերքի կետից գնված երկու հատ հացի դիմաց վճարված 200 դրամ գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, կատարված գնումից հետո՝ ժամը 12:05-ին, ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Այնուհետև կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 12:06-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվությունը:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ՀԴՄ-ի միջոցով հաշվարկներն իրականացնելու համար պատասխանատու անձը պարտավոր է ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարը (ներառյալ կանխավճարը) ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել կտրոն:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցները հիմնավորում են ընկերության կողմից ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները խախտված լինելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 21.07.2015 թ-ի թիվ 5104033 ակտը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ